ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՔՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՆԻՍՏԻ

31.03.2025թ. ք. Վանաձոր

2025 թվականի մարտի 31-ին Վանաձորի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 7-ի թիվ 618 որոշմամբ որոշմամբ ստեղծված կառավարման հանձնաժողովի թիվ 2 նիստը՝ Մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում առաջարկների քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝ Հ. Վիրաբյանը, հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Վ. Գրիգորյան, հանձնաժողովի անդամներ՝ Լիլյա Դավթյանը, Աստղիկ Ավետիքյանը, Արման Բերնեցյանը, Յանա Մկրտչյանը, Լուսինե Բարաթյանը, քարտուղար՝ Ա. Խաչատրյանը:

Օրակարգում՝
Վանաձոր համայնքում մասնակցային բյուջետայորման գործընթացի շրջանակներում առաջարկների քվեարկության արդյունքների ամփոփում:

Լսեցին՝
հանձնաժողովի նախագահ՝ Հ. Վիրաբյանը ներկայացրեց, որ մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցի համաձայն, առաջարկների քվեարկության փուլն ավարտվել է:

Հանձնաժողովի անդամ՝ Լ. Դավթյանը ներկայացրեց առաջարկների քվեարկության արդյունքները՝ առավելագույն թվից նվազման կարգով:

- Երկու խաղահրապարակի կառուցում Գուգարք գյուղում՝ 1241 ձայն
- Շահումյան բնակավայրում ֆուտբոլի դաշտի վերակառուցում՝ 1198 ձայն
- «Սպորտային -խաղահրապարակի կառուցում» Շահումյան գյուղում՝ 1126 ձայն
- Վանաձոր համայնքի հասցեների տեղեկատվական համակարգի բարեկարգման ծրագիր՝ 590 ձայն
- Skate Park-ի կառուցում Վանաձորի Սայաթ-Նովայի անվան քաղաքային զբոսայգում՝ 543 ձայն
- Վանաձոր համայնքի հասցեների տեղեկատվական համակարգի բարեկարգման ծրագիր՝ 387 ձայն

Հանձնաժողովը որոշեց՝
Առաջարկել Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Փելեշյանին, վերոնշյալ երեք առաջարկ նախագծերի հիման կրա կազմել նորմատիվային հայտեր և ներկայացնել << Տարածքային կառավարման ենթակառուցվածքների նախնարարություն" համաձայն << կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշմամբ հաստատված կարգի:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Վիրաբյան

Քարտուղար՝ Ա. Խաչատրյան